

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՃԱՐՏԱՌՈՒԹԻՒՆ

Բ .

Ղափնդեղը լուսուռն ու ջարդելու հերպը :

ՂԱԿՆԴԵՂԸ լուսուռն խիստ հարկաւոր բան մը չէ . վասն զի թէ որ վրան քիչ մը հող ալ կ'աւած ըլլայ, ճգմուած ատենը չեղին հետ հոյզէն կը զատուի ու շաքարին ամենեւին փնաս չտար . բայց լուսուռն աղէկ է, որպէս զի մաքրուի ու մանր խիճերն ու աւազները ճակնդեղը ջարդելու ատեն արգելք չըլլան ու գործիքը չաւրեն :

Լուսուռն կերպը գլանով շատ կը դիւրանայ . ամէն անգամ գլանին մէջ երկու պարկ ճակնդեղ կրնաս լեցընել, ու քանի մը անգամ գլանը դարձնելու որ ըլլաս՝ մէկէն կը մաքրուին . երբոր տակի տաշտը հողով լեցուի, պարպելու ու նոր ջուր լեցընելու է : Ոմանք ճակնդեղը լուսուռն առաջ կոթելով կը կտրեն . բայց շատերը աս գործողութիւնս աւելորդ աշխատանք կը սեպեն, ու շաքարի նիւթին ալ մեծ կորուստ է կ'ըսեն . և իրաւ է . վասն զի անկարելի է որ կոթը կտրեմ ըսելով բանջարին մեծ մասն ալ չիճացընես : Ոմանք ճակնդեղին կոթերը կտրելով՝ անոնց հիւթը զատ հաներ են, ու տեսեր են որ գրեթէ բոլոր ճակնդեղին շաքարի նիւթին հաւասար է, տեսակն ալ աւելի ազնիւ ու պատուական, ու նիւթը հանելն ալ աւելի դիւրին :

Ղափնդեղը ջարդելու համար շատ տեսակ գործիքներ հնարած կան, բայց աւելի լաւն ու կատարեալը հիւմակուան գործածականն է . ասիկայ փայտէ գլան մըն է՝ չորս կողմը դանակի պէս երկաթ թիթեղէ ակռաներով . աս թիթեղները գլանին ա-

ռանցքին զուգահեռական դրուած պիտի ըլլան, որ երբ գլանը բաւական շուտութեամբ դարձնես, քանի որ դանակները ճակնդեղին դպին՝ զանիկայ բարակ կը ջարդեն : Վլանդորչափ ուզես՝ կրնաս մեծ ու պզտիկ շինել . սովորաբար երկայնութիւնը 20 կամ 30 բթաչափ կ'ըլլայ . իսկ վրան հաստատուած դանակները պէտք է որ առանցքին զուգահեռական, ու մէկմէկէ ինը գծաչափ հեռու ըլլան . ոմանց բերանն ալ սղոցի ակռաներուն պէս կրնայ ըլլալ . և ամէնն ալ բոլոր գլանին փայտէն երկու գծաչափ երկայն պիտի ըլլան : Վլանին առանցքը պէտք է որ երկու ծայրէն ալ կոթ ունենայ որ կարենաս ուզած դիրքովդ դարձնել, որպէս զի ակռաները երկու կողմով ալ բանին . վասն զի փորձուած է որ եթէ ակռաներուն մէկ կողմը միայն բանեցընես, դանակներուն բերանը մէկալ դին կը ծռի ու հարկ կ'ըլլայ գլանը փոխել :

Երբոր աս ակռաները շատ գործածութենէ մաշին ու սկսին կարճնալ, տակերնին փայտ դնելով բարձրացընելու է . ասով մէկ գլանը ինչուան տասը տարի կրնայ դիմանալ :

Շաքարի հիւթին ազնուութիւնն ու զատուիլը ակռաներուն դիրքէն ալ կը կախուի : Ոմանց քերոցին ակռաները հաւասարակողմ եռանկեան դրութեով հաստատուած են՝ մէկմէկէ երկու գծաչափ ու կէս հեռաւորութե . աս յայտնի է որ դանակները որչափ մէկմէկու մօտ դրուած ըլլան, գործողութիւնն ալ այնչափ աւելի շուտով կ'ըլլայ, ճակնդեղն ալ աւելի կը մանրուի . որով շաքարի հիւթն ալ առատ կ'ըլլայ :

Վլանը սովորաբար ատամնաւոր ճախարակներով կը դարձնեն, որով մէկ վայրկեանի մէջ հինգ հարիւր անգամ շրջան կ'ընէ . բայց ճախարակներուն տեղը չուան գործածելը աւելի աղէկ է, որովհետեւ աւելի աժան կ'ըլլայ, գլանն ալ աւելի շուտ կը դառնայ : Ղուաններուն մէկմէկու հանդիպած

տեղն ալ՝ որպէս զի քսուելով չմաշի , կրնաս մէկ առանցքի վրայ առնուած կրկին ճախարակ գործածել , որ չուան ները անոնց վրայէն անցնին ու մէկ-մէկու շփուելով շուտով չմաշին . իսկ աս գործիքը դարձնելու համար մարդիկ կամ կենդանիք կը գործածուին :

Ճակնդեղը ջարդելու համար պէտք է գլանին քովը եղած սորին մէջ լեցնել , որ մէկը ձեռքը փայտի կտոր մը առած՝ ճակնդեղները դէպի դանակներուն բերանը կը հրէ . բայց շատերը կը փափաքին որ աս գործողութիւն աւելի դիւրանայ . այսինքն սորին մէջ լեցուած ճակնդեղները ամէն անգամ գլանը դարձնելու դիրքէն իրենց մէջ շարունակ դանակին բերանը գան . բայց ճակնդեղին խառնափնդոր ձևին ու հաստութեանը համար աս բանս գրեթէ անկարելի կ'երևնայ , որովհետեւ խոշոր ու տձեւ ըլլալով՝ սորէն վար չկրնար սահիլ :

Բայց ան փայտի կտորին տեղը՝ որով ճակնդեղը գլանին առջևը կը հրեն , կրնայ դռնակ մը շինուիլ , և ան դռնակին չուանը գլանին առանցքին վրայ պլուելով , քանի որ դռնակը գոցուի՝ ճակնդեղները հարկաւ իրենք իրենցմէ գլանին առջևը կուգան . ու մէկ մեքենայով երկու գործողութիւնը մէկտեղ կը կատարուի , և ուրիշ մարդու կարօտութիւն չես ունենար :

Հիւ ատենի քրիստոնէից համար կ'ըսեն եղեր հեթանոսները թէ « Տեսէք ինչպէս կը սիրեն մէկը մէկ » : Աստուած տայ որ հիմա չըսեն թէ « Տեսէք ինչպէս կ'ատեն մէկը մէկ » :

ՄՈՒՈՐԵԼՈՑ վրայ ցաւելու է , չէ թէ ծափ զարնելու : Աշխարհքիս վրայ ատելի բան մը կայ նէ՝ ատելութիւնն է :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Խնդիրապէս :

Թէ մէկ տարուան մէջ որչափ անձրեւ կուգայ Կոստանդնուպօլիս քաղքին և չըջակայ երկիրներուն վրայ . և թէ մէկ տան մը համեմատ ինչ մեծութիւն ջրի շտեմարան կամ ջրշէղջ¹ շինել պէտք է :

Երբ ՈՊԱՑԻՔ որ ամենայն բարձրագոյն գիտութեանց մէջ՝ Եգիպտացւոց , Յունաց և Բրաբացւոց ունեցած գիտութեան գերազանցեցին , անհոգ չեղան բնութեան ամէն մէկ մանր գործողութիւններն ու գաղտնիքը քննել ու դիտելու . զոր օրինակ թէ արդեօք աշխարհքիս վրայ փչած հովերը ինչ աստիճանի սաստկութիւն ունին , կամ ո՞ր երկրին հովը աւելի զօրաւոր է . կամ թէ մէկ տարուան մէջ իւրաքանչիւր կլիմայի տակ՝ արդեօք արեւը որչափ ջուր ծովին երեսէն և որչափ գետնին վրայէն կը քաշէ , ամպ կը գոյացնէ , և այլն :

Եւսպէս ալ իմանալ ուզելով թէ երկրքէն իջած անձրեւը , թէ որ հողը չծածէր կամ արեւը չցամքեցընէր , և թէ ասդին անդին չվազելով եկած տեղը մնար , արդեօք որչափ ջուր երկրիս վրայ կը բարձրանար . ահա աս գտնելու համար հնարեցին անձրեւաչափ² քսուած գործիքը , որով կը չափեն ամէն տարի մէկ քաղքի մը վրայ եկած անձրեւը :

Բայց մինչև հիմա Կոստանդնուպօլսոյ վրայ եկած անձրեւը որչափ ըլլալը ոչ ոք հրատարակած ըլլալով , արժան համարեցանք Բազմավիպիս մէջ նշանակել . ուրիշ ժամանակի ձգեւելով զանազան կլիմաներու տակ եկած արձրեւներուն չափը տալու :

Եւ բանս թէպէտ հետաքրքրական նիւթ մըն է իմանալու թէ ամէն տա-

¹ Սառնէճ :

² Գղ . Pluviomètre .